

կամ Աւետարանոցի մէջ, իսկ երրորդը՝ Դիզակի մէջ: Կոչիսի Սըղ-
նախը կը ղեկավարէր Բաղր մելիք Շահնազարեանը, որ հակառակ
էր Աւան եւ Թարխան իւզբաշիններուն եւ սկզբնական շրջանին նոյն
իսկ հակառակ էր ազատագրական շարժումին: Այս Սղնախներէն իւ-
րաքանչիւրը, պէտք եղած ժամանակ, կրնար մինչեւ չորսէն հինգ
հազար կռուողներ ուղի հանել: Վերոյիշեալ Սղնախներէն զատ, Ղա-
րաբաղի ուրիշ զանազան շրջաններու մէջ ալ կը կազմակերպուէին
պաշտպանութեան ուրիշ փոքրիկ կեդրոններ:

Ահա փոքրիկ ցանկ մը՝ Ղարաբաղի մէջ կազմակերպուած Սըղ-
նախներուն եւ ամրոցներուն, որոնք նշանաւոր հանդիսացած են ա-
զատագրական շարժումի օրերուն.

Խաչէնի Ազնախ, որուն Մելիքն էր Գրիգոր Զալալեանց, իսկ իր
իւզբաշիններն էին Սարուխան, Պաղի եւ Օհան:
Զրաբերդի Ազնախ, որուն Մելիքն էր Եսայի, եւ ասոր մահէն
ետք՝ իր որդին Մէժլում. իւզբաշիններ՝ Թարխան, Շրուան ու Սար-
գիս:

Կիւլստանի Ազնախ, որուն Մելիքներն էին՝ Յովսէփ, Թամրազ
եւ Աբով, իսկ իւզբաշինները՝ Մելքում, Միրզա եւ Աբրահամ:
Վարանդայի Ազնախ, որուն Մելիքն էր Պաղի, իսկ իր իւզբա-
շիններն էին Դաւիթ, Զաքարիա եւ Աւան:

Դիզակի Ազնախ, որուն Մելիքն էր Եկեան կամ Էկան, իսկ իր իւզ-
բաշիններն էին Սիմոն, Պալասան եւ Յովհան:

Արցախի ամրոցներն էին
Գարդման Սլոնաբերդը, Մեծ-կողմանց կամ Կիւլստանի Մելիք-Բէկ-
լարեաններու ամրոցը, Զրաբերդի մէջ՝ Զրաբերդ ամրոցը, Սաչենի
մէջ՝ Կաչաղակաբերդ եւ Սոխանաբերդ ամրոցները, Վարանդայի
մէջ՝ Աւետարանոց ամրոցը, Դիզակի մէջ՝ Դոռ եւ Յօր ամրոցները,
Շաքուայի մէջ՝ Սրխով-Սոսրով ամրոցը, ինչպէս նաեւ Փիլիպոս,
Սրհառն եւ Անուշ բերդերը:

Սկզբնական շրջանին, ինչպէս վերեւ ըսինք, այդ Սղնախներն ու
Մելիքներու զինուորութիւնը իրարմէ անկախ էին, բայց Եսայի Կա-
թողիկոսի ջանքերով ու Լեզգիներու շարունակական արշաւանքներուն
պատճառով, որոնց զոհ կ'երթային հայկական զիւղերը, այդ դի-
մադրող անջատ ուժերը իրարու միացան ու կազմեցին հայկական
զինուորութիւնը:

Սղնախներու միութենէն ետք, իւրաքանչիւր Սղնախ դարձեալ կը
կառավարուէր իր առաջնորդէն, այսինքն՝ մելիքէն կամ իւզբաշին-
վտանդի ժամանակ՝ Սղնախներու բոլոր առաջնորդները կը հրաւիր-
ուէին պատերազմական խորհուրդի, եւ որոշումներ կ'առնուէին ու
դիմումներ կը կատարուէին «Հայոց ժողովք»ի անունով, ինչպէս
յայտնի է Ռուս Յարերուն ուղղուած նամակներէն: Նամակներու տակ

կը ստորագրէին ներկայ գտնուող բոլոր Մելիքներն ու իւզբաշինները,
որոնք խորհրդակցութեան ժամանակ՝ ամէնքն ալ ունէին հաւասար
ձայն եւ իրաւունք: Մելիքները ժառանգական էին եւ կամ կը նշա-
նակուէին պարսիկ տէրութենէն, իսկ իւզբաշինները կ'ընտրուէին
զինուորներու կողմէ՝ քաջագոյններէն:

Հիմնուելով այն տեղեկութիւններուն վրայ՝ զոր Աւելիքները եւ
իւզբաշինները գրած են Պետրոս Մեծին, խնդրելով զինուորական օգ-
նութիւն, հայկական զինուորութիւնը այդ շրջաններուն մէջ կը հաս-
նէր 40.000էն մինչեւ 60.000ի: 1719 թուականէն սկսեալ մինչեւ 1724
նէր 40.000էն մինչեւ 60.000ի: 1719 թուականէն սկսեալ մինչեւ 1724
թուականը, այդ բանակին ղեկավարն ու իւրախուսիչն էր Եսայի Կա-
թողիկոս:

Ոչ միայն Հայերու, այլ նաեւ Վրացիներու մէջն ալ սկսած էր
տարածուիլ ազատագրական գաղափարը, եւ այս՝ Օրբի ժամանակէն
սկսեալ, ու անոր ձեռնբեցցութեամբ: Ինչպէս վերեւ յիշատակեցինք,
երբ 1701 թուականէն սկսեալ Օրբին Մոսկուա կը գտնուէր ու Ռուս
պետութիւնը կը շահագրգռէր Արեւելեան հարցով, այդ շրջանին կը
ծրագրէր դիւանապետական ձեռնարկ մը, որ ապագային պիտի ու-
նենար իր օգտակար հետեւանքը: Այդ ժամանակներուն Մոսկուայի
մէջ իբրեւ աջօտրական կը գտնուէր Վրաց թագաւորի որդին՝ Արչիլ.
Օրբի, 1704 թուականին, կը մօտենայ ու կը մտերմանայ վրացի իշ-
խանին, ու միասին կը մշակեն դործակցութիւն մը՝ ազատագրական
գետնի վրայ, ու այդ ուղղութեամբ դիմումներ ալ կը կատարեն թէ՛
Մեծն Պետրոս կայսեր եւ թէ՛ Տիւսելտորֆի Յովհան Վիլհելմ իշխա-
նին: Այլեւս ազատագրական հարցը միայն հայ ազգին հետ կապուած
չէր, այլ ընդհանուր քրիստոնեայ ազգաբնակչութեան հետ, որ դա-
րերէ ի վեր կը հեծէր պարսիկ բռնակալութեան լուծին տակ: Զեռ-
նարկ մըն էր ասիկա, որ դուցէ նոյն ժամանակ կը հետաքրքրէր նաեւ
քրիստոնեայ Եւրոպան ու Ռուսաստանը, միջամուխ ըլլալու իսլամ
պետութիւններու մօտ՝ ոչ թէ միայն հայ ազգի ազատագրութեան
ի նպաստ, այլ համայն քրիստոնեայ տարրին համար:

Օրբի մահէն ետք, հայ-վրացական դործակցութիւնը կը դրուի
դործնական գետնի վրայ:

1719 թուականին, Սպահանի իր գերութենէն Թիֆլիս կը վերա-
դառնար Վրաստանի Վախթանգ թագաւորը, ժամանակին պահան-
ջուած ու յարմար անձը, որ հազիւ բարձրացած թագաւորական ա-
թոռը՝ կը սկսէր հետապնդել զոյգ քաղաքականութիւն. այսինքն
նախ՝ Վրաստան իրեւ քրիստոնեայ ազգ, պէտք էր մօտենալ Պիո-
սերուն, վերջնականապէս ազատելու համար իսլամական ազդեցու-
թենէն, եւ եթէ հարկը պահանջէր՝ նոյնիսկ հպատակելով այդ քրիս-
տոնեայ պետութեան: Երկրորդ՝ տեղեակ այն պատրաստութիւննե-
րուն, զոր Հայերը կը տեսնէին, ազատագրութեան կապակցութեամբ,

եւ այն դիմումներուն՝ զոր անոնք կը կատարէին Պետրոս Մեծին, ապահովելու համար ռուսական օժանդակութիւնը, ինքն ալ հարկ կը դրայ մօտենալ Հայերուն: Վախթանգի պէս քաղաքագէտ հմուտ միտք մը դիւրու կ'անդրադառնար ու կը տեսնէր այն օգուտները՝ զոր երկու ազգերու միութեամբ կարելի էր ստանալ. ուստի, յարաբերութեան մէջ կը մտնէր հայ ազատագրական շարժումի ղեկավարներուն հետ:

Երբ Վախթանգ կը յղանար հայ-վրացական գործակցութեան քաղաքական ծրագիրը, այդ ժամանակ՝ հայ ազատագրական շարժումի գլուխ կանգնած էր Եսայի Կաթողիկոսի նման հայրենասէր, կամքի տէր ու բարձրորակ անձնաւորութիւն մը, այսինքն՝ պահանջները թաղաւորին, իրագործելու համար գործակցութեան ծրագիրը: Այս միութեամբ՝ Վախթանգ խրատոյս կը ներշնչէր Հայերուն, ու անոնք հաստիքի ծառայութիւններ կ'ընէր անոնց, կազմակերպելով հայ զինուորութիւնը՝ որ արդէն գոյութիւն ունէր, բայց անկազմակերպ վիճակի մէջ, տալով Հայոց զինուորական մարզիչներ:

Որքան որ հայ զինուորութիւնը, վրացիներուն միացած, կրնար դիմադրել ու նոյնիսկ յաջողութիւններ արձանագրել՝ խաներու եւ կիսավայրերի Լեզգիներու դէմ, բայց այդ յաղթանակները չէին կըրնար իրենց վստահութիւն ներշնչել՝ եթէ ընդհարումը տեղի ունենար օսմանեան կանոնաւոր բանակին դէմ, որովհետեւ թէ՛ հայ եւ թէ՛ նէր կանոնաւոր պատերազմի. իրենց կը պակսէին զէնք ու ռազմա-նաջնորդեր. ասկէ է որ Օրբի ժամանակէն սկսեալ՝ Հայերն ու վրացիները իրենց յոյսը դրած էին ռուսական օգնութեան ու պաշտպանութեան վրայ, որով շարունակաբար բանազնացութեան մէջ էին Ռուսերը իջան Կասպից ծովեզերքը, իսկ Թուրքերը առիթ առած ռուսական այդ արշաւանքը՝ սկսան քայլել վրաստանի ու Արեւելեան Հայաստանի վրայ:

* * *

Տեսնենք այժմ այն յարաբերութիւնները՝ զոր Հայերը մշակեցին ռուսական պետութեան եւ ի մասնաւորի Պետրոս Մեծի հետ: Եսայի Կաթողիկոս հանգիւ ստանձնած իր կաթողիկոսական պաշտօնը, 1703 թուականի դարնան, Գանձասարի մէջ կը գնամարէ Մելիքներէ ու եկեղեցականներէ կազմուած ժողով մը, ուր կը քննուին Օրբիէն ու Մինաս Վրդ.էն ղրկուած նամակները, որոնց Սիմէոն Կա-

թողիկոս չէր պատասխանած. ժողովականները խանդավառ մթնոլորտի մէջ կը յայտնեն իրենց լիուլի համաձայնութիւնը՝ Օրբիէն ու Մինաս Վրդ.էն կատարուած աշխատանքներուն համար. ժողովականներու կողմէ կը գրուին երկու նամակներ, մին ուղղուած Օրբիէն ու Մինաս Վրդ.ին. իսկ երկրորդը Պետրոս Մեծին, առաջինին մէջ անոնք կը յայտնեն իրենց ջերմ ուրախակցութիւնը անոնց կատարած աշխատանքին ու ձեռք բերած յաջողութիւններուն համար, իսկ Յարին ուղղուած նամակին մէջ կը յայտնեն իրենց խանդավառ երախտագիտութիւնը եւ ուրախութիւնը՝ Կայսեր կողմէ առնուած բարենպաստ որոշման համար, ազատելու քրիստոնեաները անհաւատներու լուծէն. այդ նամակին մէջ կը յայտնեն նաեւ որ Օրբի ու Մինաս Վրդ. իրենց կողմէ լիազօրուած անձնաւորութիւններ են, եւ թէ իրենց այդ ներկայացուցիչներուն հանդէպ ունին անվերապահ վստահութիւն, եւ համաձայն են ազատագրական շարժումի նկատմամբ անոնցմէ կատարուած ձեռնարկներուն. նամակը կը փակեն մաղթելով որ Աստուած անսասան պահէ ռուս կայսերական աթոռը:

Ինչպէս վերեւ ըսինք, Օրբի մահով՝ ազատագրական շարժումը դերեզման չէր իջներ, այլ հինգ տարի անշարժութեան կը մատնուէր ու տեղքայլ կ'ընէր (1711-1716). անշարժութիւն մը, սակայն, որ առաջ կուգար միջազգային ընդհանուր կացութեան:

1716 թուականին սկիզբները, Մինաս Վրդ. Տիգրանեան ղեռ Մուկուա կը գտնուէր. Օրբի միջոցով՝ ան արդէն ծանօթ էր ռուս պետութեան. այդ թուականին՝ Պետրոս Մեծ զինք ձեռք կ'առնէ, գորտածելու համար Անդրկովկասի մէջ քաղաքական իր նպատակներուն իրագործման. զինք կը ղրկէ Արեւելեան Հայաստան, տեղեկութիւններ հաւաքելու՝ կատարելիք իր Արշաւանքին համար, եւ յուսադրեաներ հաւաքելու՝ կատարելիք իր Արշաւանքին համար իր ընելիք օժանդակու Հայերը՝ իրենց ազատագրութեան համար իր ընելիք օժանդակութեան հեռանկարով, եւ հայ տարրին մէջ ստեղծելու համար Ռուսերու հանդէպ համակրութեան մթնոլորտ մը, որպէսզի օժանդակեն սերու հանդէպ համակրութեան մթնոլորտի Յուլիսին, Մինաս իր կատարելիք արշաւանքին: 1716 թուականի Յուլիսին, Մինաս իր կատարելիք արշաւանքին կու տայ էջմիածնի, որու կաթողի-Վրդ. իր առաջին այցելութիւնը կու տայ էջմիածնի, որու կաթողի-Համադացին: Մինաս Վրդ.ի ընդունելութիւնը նախորդ պատուիրակ-ներու ընդունելութիւններէն տարբեր չ'ըլլար. սիրով կ'ընդունուի Յարին պատգամաւորը, բայց Կաթողիկոսը, նկատի ունենալով միշտ լու դրական խոստում չի տար Կաթողիկոսը, նկատի ունենալով, որով հեռու պարսիկ տէրութեան կողմէ ըլլալիք հակազդեցութիւնը, որով հեռու կ'ուզէ մնալ գործօն մասնակցութիւն բերելէ ազատագրական շարժումին: Ասոր հակառակ, Գանձասարի մէջ, Մինաս Վրդ.ի ընդունելութիւնը կ'ըլլայ դրական ու շատ խանդավառ, որուն արդիւնք ներկայութիւնը կ'ըլլայ դրական ու շատ խանդավառ, որուն արդիւնք էր նաեւ Մինաս Վրդ.ի Արեւելիսկոյոս ձեռնադրուելը՝ Եսայի Կա-

յանկարծակի առնուած որոշում մը չէր. ասիկա կը հաստատուէ նաեւ Վախթանգի նամակին մէջ, գրուած իբրեւ պատասխան Պետրոս Մեծի հրահանգ նամակին:

Վախթանգ ու Եսայի Կաթողիկոս 1722ի Սեպտեմբերի կէսին, ճամբայ կ'իյնան դէպի Շամախ, նոյն թուականի Հոկտեմբեր 1ին միանալու համար ոռու բանակին. երբ կը հասնին Խրամ գետի վըրայ գտնուող Կոտրած կամուրջը, թագաւորը առաջ կը ղրկէ Եսայի Կաթողիկոսը՝ դէպի հիւսիսային Ղարաբաղի Սղնախները, իր հետ բերելու հայ զինուորութիւնը: Մելիքները Կաթողիկոսին կը յանձնեն 10.000 մարտիկներ, Աւան Շիվան, Շահնին ու Սարուխան իւզբաշիններով: Յետ երեք օր ճամբորդութեան, հայ-վրացի բանակները մեծ խանդավառութեամբ իրարու կը միանան, Գանձակի մօտ, Զօլակ անունով տեղւոյ մը մէջ:

1722ի Հոկտեմբեր 4ին, Վախթանգ նամակ մը կը գրէ Պետրոս Մեծին, իմացնելով իր Գանձակ հասնիլը ու նոր հրահանգներու ըսպասելը: Հայ-վրացի բանակները երկու ամիս կը մնան Գանձակ՝ սպասելով միշտ Յարի պատասխանին, իսկ Յարը տեղեակ չըլլալով Վախթանգին ճամբայ ելլելուն, Իւան Տոլստոյ սպայի մը հետ նամակ կը ղրկէ Թիֆլիս՝ իմացնելու դէպի Աստրախան իր վերադարձը ու արշաւանքին դադարումը:

Վախթանգին տեղ՝ նամակը կը ստանայ իր տղան, Վախուշտ, Թիֆլիսի մէջ, ու անմիջապէս կը ճամբէ Գանձակ՝ իր հօրը: Մեծ կ'ըլլայ հայ-վրացի բանակներուն յուսախարութիւնն ու յուսալքումը, լսելով ոռու բանակին ետ քաշուիլը. խորհուրդ կ'ընեն ու իրենք ալ ետ կը վերադառնան իրենց բանակատեղիները. սակայն զինուորութիւնը չեն ցրուեր, այլ կազմ ու պատրաստ կը պահեն՝ դիմադրելու թշնամիի յարձակումներուն, որոնք չեն ուշանար:

Հայ եւ վրացի բանակներուն հանդիսաւոր ու յայտնի կերպով Պետրոս Մեծին ընդառաջ երթալու այդ ելոյթով, երկու ազգերու քերուկ, Պարսիկներուն եւ Լեզգիներուն, որոնք արդէն վատ աչքով կը դիտէին Սղնախներու մէջ կատարուած պաշտպանողական աշխատանքները. առիթ առած այդ արշաւանքը ու մանաւանդ Պետրոս Մեծի Աստրախան քաշուիլը, իրենք ալ յայտնի կերպով կը սկսին թշնամական գործողութիւնները: Վախթանգի Թիֆլիս դառնալէն ետք՝ իսլամ հրոսակները կը յարձակին Ղարաբաղի հայ բնակչութեան վրայ, աւերակ կը դարձնեն Շարորան քաղաքը՝ իր գիւղերով, ինչպէս նաեւ Մսկուրի եւ Մոլլա Խալիլ գաւառներու հայ գիւղերը: Բացի տեղական քանի մը փոքր ընդհարումներէ, ուժեղ դիմադրութիւն կը ցուցադրեն Ջրաբերդ, ուր առաջնորդուած Տոմազ իւզբաշին, յանկարծակի բերելով Օսմանցիներու բանակը, անոնցմէ կը

կոտորեն 5.800 զինուոր. այս քաջագործութիւնը փորագրուած է Ջրվշտիկ վանքի պարիսպին վրայ: Նոյնպէս ուժեղ դիմադրութիւն ցոյց կու տան Խաչէնցիները՝ Կաչաղակաբերդի առջեւ, Վարանդացիները՝ իրենց Հիւսէին առաջնորդով. բայց ամենամեծ պատերազմները տեղի կ'ունենան Դիզակի Սղնախին եւ Ղափանի Բաղաբերդի մօտ, ուր կը կոտորուին Օսմանցիներու բանակէն բազմաթիւ զինուորներ. այս պատերազմներու ընթացքին՝ Հայերուն շատ կ'օգնեն Արցախի ու պատմական Միւնիքի անմատչելի ու սոսկալի դիրքերը: Հայ պատերազմիկներուն մէջ հերոսի անուն կը հանէ Մելիք Եկանին, Դիզակի իւզբաշին:

1722ի Դեկտեմբեր 12ին, Մինաս Վրդ. Փերուագեան՝ Ղարաբաղի այդ տաղանապալից կացութիւնը նամակով մը կը հաղորդէ Մոսկուա, Մինաս Վրդ. Տիգրանեանին, որ իր կարգին՝ նամակին բովանդակութիւնը կ'իմացնէ ոռուսական պետութեան:

Պետրոս Մեծ չէր ուզեր որ Հայերն ու վրացիները յոյսերնին կտրելով ոռուսական օգնութենէն՝ համաձայնէին թուրքերուն հետ. որով 1723 թուականի Ապրիլ 19ին նամակ մը կը գրէ Հայերուն ու վրացիներուն, ղրկելով զայն Պետր Տոլստոյի հետ. այդ նամակին մէջ, Յարը կ'ըսէր թէ ինք թուրքերուն հետ համաձայնած էր որ չյարձակին Հայերուն եւ վրացիներուն վրայ, բայց իմացած ըլլալով որ թուրքերը զօրք կը ղրկեն այդ կողմերը, ինքն ալ հրահանգած լով որ թուրքերը զօրք կը ղրկեն այդ կողմերը, ինքն ալ հրահանգած էր Կասպից ծովեզերեայ իր բանակին՝ որ օգնութեան փութան Հայերուն եւ վրացիներուն. բայց այդ օգնութիւնը երբեք չհասաւ այդ երկիրներուն, որոնք մնացին իրենց ճակատագրին:

Պետրոս Մեծ կ'ուզէր վերջին փորձ մըն ալ ընել՝ բանակցութիւններով լուծելու խնդիրը. ուստի, թուրքիոյ կ'առաջարկէ որ Ռուսերը մնան իրենց գրաւած հողերու վրայ, թուրքերն ալ գրաւեն պարսկական ուրիշ հողեր, բայց վրաստան ու պարսկական Հայաստան նկատուին իբրեւ չէզոք երկիրներ. թուրքերը այդ առաջարկը չեն ընդունիր ու պատերազմը անխուսափելի կը նկատուի. սակայն, Պոլսոյ Փրանսական դեսպանը՝ Բոննա կը միջամտէ ու կը համոզէ որ խորհրդակցութիւններով խնդիրը կարգադրուի:

1723ի ամառը Յարին կողմէ նոր յուսադրութիւններ ու խրախոյսներ կու գային, ըսելով Հայերուն որ դիմադրեն՝ մինչեւ որ քաղաքական կացութիւնը պարզուի, ու կը յարէր թէ ինք վճռած է անպատճառ իրագործել անոնց ազատութիւնը. այդ հրովարտակը ուղարկուած էր Մեծ Սղնախներու իւզբաշիններուն, իսկ այդ նամակը հրովարտակը բերողն էր Իւան Կարապետ անունով հայ մը, Զուղայեցի վարտակը բերողն էր Իւան Կարապետ անունով հայ մը, Զուղայեցի վաճառական ու քաղաքական գործիչ, ծանօթ՝ Մոսկուայի պետական շրջանակներուն. նամակը եօթը ամիս կը դնէ հասնելու, որովհետեւ ճամբաները Լեզգիներու հսկողութեան տակ կը գտնուէին:

Որքան Ռուս կայսրը կը յուսադրէր Հայերը թէ մօտ էր իրենց ազատութեան ժամը, այնքան կացութիւնը երթալով կը վատթարանար: 1723 թուականի Հոկտեմբերին, նոր ամպեր կը կուտակուէին Հայերու Սղնախներու վրայ. Իպրահիմ փաշայ, 80.000 զօրքով, կը կողոպտուէին ու քնակիչներէն շատերը գերի կը տարուէին. Սղնախներու իւզբաշիններու կողմէ պատգամաւորութիւն մը կը ներկայանար փաշային, ու կը պահանջէր որ հայ գերիները ազատ արձակուէին, քանի որ դիմադրութիւն չէին ըրած, ու ինք եկած էր Գանգերելու. Իպրահիմ փաշան ուզելով սիրաշահիլ հայ Սղնախները, գերիները կ'արձակէ, ու Աւան իւզբաշին մարդ կը զրկէ՝ առաջարկելով որ թուրք բանակին միանայ, քանի որ իրենց դէմ չէ որ եկած էր, այլ՝ Ռուսերուն, բայց Հայերը առաջարկը չեն ընդունիր:

Թուրք բանակը 70.000 զինուորներով կը պաշարէր Գանձակը, որ կը պաշտպանուէր Ատրպէյջանցիներէ ու Պարսիկներէ. ասոնց օգնութեան կը հասնի նաեւ Մահմուտ-Ղուլի խանը. պաշարուողները 18-20 օր կատաղի դիմադրութիւն ցոյց կու տան, թուրքերը քաղաքի շուրջը 7000 զինուոր կորսնցնելով կը ստիպուին պաշարումը վերադառնալ: Վախժանդ թագաւորը կը ձգէր քաղաքը ու կը թափառէր Վրաստանի լեռներուն վրայ, սպասելով Ռուսերու օգնութեան:

Բացի արտաքին թշնամիէն, Հայոց Սղնախներուն կը սպառնար նաեւ ուրիշ աւելի վտանգաւոր թշնամի մը, եւ ատիկա էր ներքին երկպառակութիւնը: Ներսէս՝ Երից Մանկանց վանքի Կաթողիկոսը, հակաթուրք Գանձասարին, թէեւ ազատագրական շարժումի ազդեցութեան տակ համաձայնած ու միացած էր Եսայի Կաթողիկոսին, սանալը, նախանձէ դրդուած, կը բաժնուի Մեծ Սղնախէն ու գլուխ անցնելով քանի մը իւզբաշիններու եւ մելիքներու, կը կազմէ առանձին ինքնազուխ Սղնախ մը:

Ներսէս Կաթողիկոսէն ու իր համախոհներէն զատ՝ գտնուեցան նաեւ ուրիշ իւզբաշիններ ալ, որոնք հետեւելով Կաթողիկոսի օրինակին, իրենք ալ բաժնուեցան. անոնք թուրք փաշայի առաջարկի դիմաց՝ կշռադատելով Սղնախներու կացութիւնը, եւ տեսնելով որ մէկ կողմէն Ռուսերը իրենց օգնութեան չեն գար, եւ միւս կողմէն թուրք փաշան կ'առաջարկէր խաղաղ անձնատուութիւն, կը հակին նժարին այդ կողմը ու կը յանձնուին թուրքերուն:

Այս ողբերգական կացութեան առջեւ, 1723 թուականի Նոյեմբեր 1ին, Եսայի Կաթողիկոս շատ յուզումնալից նամակ մը կը գրէ Պետրոս Մեծին, ու կը կրկնէ իրենց օգնութեան հասնելու իր խնդրանքը,

ըը, ըսելով որ եթէ Ռուսերը չուտով իրենց չօգնեն, թուրքերը զիրենք բոլորովին պիտի կոտորեն, աւելցնելով որ եթէ նման բան մը պատահելու ըլլայ՝ Աստուած Հայերու արիւնը Ռուսերէն պիտի պահանջէ: Այս նամակը Եսայի Կաթողիկոս Մոսկուա կը զրկէ Անտոն Առաքելեան անունով քահանայի մը ձեռքով:

Թուրքերու նպատակն էր թիֆլիսը դրաւելէն ետք՝ անցնիլ Կասպից ծովի եզերքը, անկէ վնասելու համար ուսու բանակը. այս պատճառով թուրք բանակը իրեն միացուցած էր Լեզգիները, Պարսիկները ու մահմետական ուրիշ ցեղեր: Դէպի Կասպից ծով երթալու համար, Գանձակի տիրելէն ետք՝ պէտք էին անցնիլ Ղարաբաղէն, որ միակ ճանապարհն էր. իսկ Ղարաբաղ կը դիմադրէր իր Սղնախներով: Հայերուն համար դիւրին էր դէմ դնել ու ետ մղել կիսավայրենի այդ լեռնականները, բայց անոնցմէ զատ իրենց առջեւ ունէին նաեւ Օսլեռնականները, բայց անոնցմէ զատ իրենց առջեւ ունէին նաեւ մանեան կանոնաւոր բանակը, լաւ զինուած ու լաւ մարզուած, որուն դիմադրելու համար Ղարաբաղցիները չունէին ոչ միայն մարզուած բանակ մը, այլ եւ ոչ իսկ բաւարար ռազմամթերք ու զէնք, մանաւանդ թնդանօթներ՝ որոնցմով օժտուած էր թուրք բանակը: Հայերը չունէին թնդանօթ, որովհետեւ չունէին վարպետ ձուլողներ, ինչպէս կը գրեն Յարին ուղղուած նամակին մէջ:

Այն զգուշացումները, զոր Հայերը իրենց դիմադրութեամբ յանձն կ'առնէին, թոյլ չտալով որ թուրք բանակը Կասպից ծով հասնէր, մեծ օգնութիւն կ'ըլլար Ռուսերուն. ասոր գիտակից էին թուրքերը, եւ այդ պատճառով զրգուած էին Հայերուն դէմ. գիտակից էին նաեւ նոյնիսկ Ռուսերը, եւ սակայն առեղծուած մը կը մնայ այս երեւոյթը՝ թէ ինչպէս Ռուսերը գտնուելով հանդերձ Կասպից ծովի եզերքը, այսինքն՝ Սղնախներէն միայն քանի մը օրուան ճամբու հեռուէր, այսինքն՝ Սղնախներէն միայն քանի մը օրուան ճամբու հեռուէր, ոչ ալ յայտնի կ'ըսէին թէ ինչ էր իրենց նպատակը եւ թէ ինչ ընել կ'ուզէին:

Կացութիւնը այս յուսահատական վիճակի մէջ էր, երբ 1724 թուականի Յունուար 1ին, յետ եօթը ամիս տեւող ճամբորդութեան, Մեծ Սղնախ կը հասնէր Իւան Կարապետ ու իւզբաշիններուն կը յանձնէր Պետրոս Մեծի նամակը, որուն մէջ կայսրը կը խրախուսէր Հայերը՝ դիմադրելու թուրքերուն եւ պահելու իրենց դրաւած դիրքերը յերեւոյթը՝ թէ ինչպէս Ռուսերը գտնուելով հանդերձ Կասպից ծովի եզերքը, այսինքն՝ Սղնախներէն միայն քանի մը օրուան ճամբու հեռուէր, այսինքն՝ Սղնախներէն միայն քանի մը օրուան ճամբու հեռուէր, ոչ ալ յայտնի կ'ըսէին թէ ինչ էր իրենց նպատակը եւ թէ ինչ ընել կ'ուզէին:

յայտնեն իրենց հպատակութիւնը՝ ամէն բան խաղաղ կը վերջանայ, ու իրենք ալ պատիւ կ'ունենան թուրքերու մօտ, ապա թէ ոչ՝ իրենց կը սպասէ կոտորած ու գերութիւն:

Աստուածատուր Կաթողիկոսի այս նամակը Մշնախներու մէջ կը ստեղծէ անորոշ կացութիւն մը. ոմանք դիմադրութեան կողմը կ'ըլլան, միշտ յուսարով որ շուտով պիտի հասնէր ռուսական օգնութիւնը, որովհետեւ դեռ չէին գիտեր 1724 թուականի Յունիս 12ի ռուս-թուրք դաշնադրութեան գոյութիւնը. իսկ ուրիշներ, որ հակառակ էին այդ հոսանքին, կողմն էին թուրքերուն հպատակելու. ասոնց գլխաւորն էր Եսայի՝ Բարտայի Մելիքը եւ ուրիշներ. կ'ըսէին թէ Գանձակի դրաւումէն ետք՝ այլեւս ընելիք չկայ, լաւ է երթալ եւ հպատակիլ թուրքերուն:

1724 թուականի Հոկտեմբերին, Մշնախներու մէջ եղած անորոշ կացութիւնը կը պարզուէր: Եսայի Կաթողիկոս, այս դժուարին վայր-կեաններուն, իր ձեռնբերէցութեամբ կրկին հաշտուելով Ներսէս Կաթողիկոսի հետ, ու իր դիւթիչ հմայքով կրկին իր վրայ կ'առնէին մելիքներու եւ իւզբաշիններու վստահութիւնը. ազատագրական շարժումը իր միութիւնը կրկին ստանալէ ետք, Եսայի Կաթողիկոս նամակով մը իր անհամաձայնութիւնը կը յայտնէ Աստուածատուր Կաթողիկոսի առաջարկին. իսկ նոյն տարուան Հոկտեմբեր 18ին նամակ մըն ալ կը գրէ Պետրոս Մեծին, յայտնելով որ թուրքերը՝ գրաւած Թիֆլիս, Երեւան, Պորչալու, Ղազախ եւ Գանձակ, կը պատրաստուին յարձակելու Ղարաբաղի վրայ, որով ճիշտ ժամանակն է իրենց օգնութեան փութալու, աւելցնելով որ եթէ ռուս բանակը իրենց կողմերը գայ, բանակի ռուսաստեղծներ իրենք կը հոգան. իսկ եթէ երկու կամ երեք ամիսէն օգնութեան չհասնին, թուրքերը բոլորովին գերենք կը կոտորեն:

Եսայի Կաթողիկոսի այս նամակը Մոսկուա կը տանին Անտոն քահանայ Առաքելեան ու Քէօխլա Չալապին, որոնք 1724ի Նոյեմբերի սկիզբները հասնելով ռուս մայրաքաղաքը, նամակը կը ներկայացնեն նախարարութեան, որպէսզի յանձնեն Պետրոս Մեծին: Կայսրը կը փափաքէր որեւէ ձեւով օգնելու Հայերուն, բայց Կովկասի մէջ դաշնադրութեամբ մը կապուած ըլլալով թուրքերոյ հետ, չէր կրնար կատարել Հայերու փափաքը, այսինքն՝ զինուորական օգնութիւն զրկել իրենց. որով կը յղանայ օգնութեան նոր միջոց մը, այսինքն՝ Ղարաբաղի Հայերը փոխադրել ծովի եզերքը, իր գրաւած հողերու վրայ. ասով միանգամայն կ'ունենար զոյգ օգուտներ, թէ՛ կատարած կ'ըլլար Հայերուն ազատագրական բաղձանքը, եւ թէ՛ դրաւած երկիրը կը զարգացնէր:

Նամակաբերները զուրկ քաղաքական հասունութենէ, կ'իյնան դիւանագիտական խաղի ցանցի մը մէջ: Արտաքին Գործոց նախա-

Եսայի Կաթողիկոսի նամակը

րարութիւնը կը կանչէ զիրենք՝ ու հարց ու փորձ կ'ընէ Ղարաբաղի կացութեան մասին, եւ ապա վարպետ դարձուցնելով մը կը համոզէ Անտոն քահանան՝ որ կայսեր ուղղուած խնդրադրին մէջ աւելցնէր նաեւ որ եթէ Ռուսական պետութիւնը համաձայն է, Հայերը կը խընդրեն որ փոխադրուին Կասպից ծովի եզերքի ռուսական հողամասերու մէջ, եւ կը խնդրէր որ այդ համաձայնութիւնը հաղորդուէր Սըղնախներու առաջնորդներուն: Հիմնուած Անտոն քահանայի խնդրագիր նամակին վրայ, Յարը 1724 թուականի Նոյեմբեր 10ին կը պատասխանէ Հայերուն՝ թէ ստացած է իրենց զրկած նամակը, եւ Անտոն քահանայի միջոցով ներկայացուած խնդրանքը, յայտնելով որ ինքն ալ համաձայն է իրենց խնդրանքին՝ փոխադրուելու Կասպից ծովի եզերքը: Միաժամանակ կայսրը հրահանգներ կը զրկէ Դերբենտի, Բաքուի, Գիլանի ու Մազանդարանի ռուս կուսակալներուն, որպէսզի տեղ պատրաստեն փոխադրուող Հայ գաղթականներուն: Միւս կողմէ՝ որպէսզի այդ տեղափոխութիւնը թուրք պետութեան մօտ քաղաքական հարց չյարուցանէ, կայսրը կը գրէ Պոլսոյ իր դեպուանին, յանձնարարելով որ թուրք պետութեան հասկցնէ՝ թէ Հայերը ինքնաբերաբար իրենք է որ գիմում կատարած են փոխադրուելու Կասպեան երկիրները, եւ եթէ թուրք պետութիւնը կը փափաքէ՝ Ռուսերը հակառակ չեն որ վերոյիշեալ քաղաքներու իսլամ տարրն ալ փոխադրուի թուրք պետութեան պատկանող հողերու մէջ: Անտոն քահանան ու Քէօխլա Չէլչային՝ Յարին նամակով Նոյեմբեր ամսուն կը մեկնին Մոսկուայէն:

Ռուս կայսեր նամակը դեռ Ղարաբաղ չհասած, 1725ի Մարտ 10ին սկսեալ թուրքերը կը մտնեն Արեւելեան Հայաստան ու Հայերուն հետ կը սկսին լեռնային մասնակի փոքր ընդհարումներ: Թուրք բանակի զորաբաժին մը Շահին Սալահ ու Ալի փաշաներու առաջնորդութեամբ, 5000 զինուորներով, կը մտնեն Վարանդա դաւառը. Հայ գիւղերու բնակիչները սիրով կ'ընդունին զիրենք, բայց անդրադառնալով արեւմտեան կողմերը, կը յղանան ինքնապաշտպանութեան մէկ նոր միջոց մը: Այդքան բազմաթիւ զինուորներու բնակութեան համար չունէին յարմար բնակարաններ, որով ամէն գիւղ իր մէջ կ'ընդունի հարիւր զինուոր, իսկ իւրաքանչիւր գիւղացի կրցածին չափ զինուոր: Երբ գիւղերը արդէն յառաջացած էր, կանխաւ որոշուած ազդանշանի մը վրայ՝ իւրաքանչիւր գիւղացի կը յարձակի իր տան մէջ գտնուող զինուորին վրայ ու կը սպաննէ զայն:

Թուրք զորաբաժնի այս կոտորածէն ետք, Եսայի Կաթողիկոս ու իւզբաշինները նամակ կը գրեն Մեծն Պետրոսին, Վախթանգին ու Շահնազին, խնդրելով որ շուտով իրենց օգնութեան դան, ազատելու համար զիրենք թուրք բանակի փոխ վրէժխնդրութենէն: Կոտորածի մա-

Ճիշտ այդ ժամանակ է որ Մոսկուայէն Սղնախները կը հասնէր Չէլէպին, իր հետ բերելով կայսրուհիին վերոյիշեալ հրովարտակը ու բերանացի տրուած ամենազրական խոստումը. Սղնախները անմիջապէս պատգամաւորութիւն մը կը ղրկեն Սալեան՝ Դորդորուկով կացութիւնը եւ օգնութեան անմիջական անհրաժեշտութիւնը: Դորդորուկով այդ ժամանակ Ռեշտ կը գտնուէր, որով պատգամաւորները Սալեանէն Ռեշտ կ'երթան. զօրավարը շատ սիրով կ'ընդունի զիրենք, բայց կ'ըսէ թէ ինք կայսրուհիէն դեռ որեւէ հրահանգ չէ ստացած, ու խորհուրդ կու տայ որ կրկին դիմեն Մոսկուա, փութացնելու օգնութիւնը. ինք ալ իր կողմէ Հայերու համար նպաստաւոր նամակ մը կը գրէ ռուս պետութեան: Հայերը իբրեւ պատգամաւոր Պետերբուրգ կը ղրկեն Քէօխլա Չէլէպին ու Բաղի իւզբաշին:

* * *

Պետրոս Մեծը՝ որ իր երկար թագաւորութեան ընթացքին ամբարած էր դիւանադիտական խոր հմտութիւն եւ ունէր քաղաքական յստակ տեսութիւն, եթէ Հայերու օգնութեան հասնելու համար չկըրցաւ լուծում մը գտնել՝ այն բարդ խնդիրներուն պատճառով՝ որոնք միջազգային գետնի վրայ իր առջեւ կը ցցուէին, ո՛րքան աւելի դժուարին էր Եկատերինայի ու Պետրոս երկրորդի համար այդ լուծումը գտնել, որոնք հազիւ երկուական տարի թագաւորեցին. զարմանալի չէ, ուրեմն, որ Եսայի Կաթողիկոսի եւ Սղնախներու այս վերջին դիմումն ալ, ինչպէս նաեւ տարի մը վերջ, այսինքն՝ 1729 Հոկտեմբեր 21էն սկսեալ Աւան իւզբաշինէն կատարուած դիմումները մընային ապարդիւն:

Չանազան այսպիսի դրդապատճառներ բացասական ազդեցութիւն կ'ընեն հայ զինուորութեան վրայ ու կորսնցնել կու տան անոր այն կորովն ու եռանդը՝ զոր սկզբնական շրջանին ունէին, եւ յուսախարեղած կը սկսին ցրուիլ:

Տասնեակ տարիներ եւ աւելի էր որ Ղարաբաղ պատերազմական վիճակի մէջ էր. տուժած էր երկրագործութիւնը, մանաւանդ այդ կողմերը՝ ուր երկիրը լեռնային էր, որով արդէն աննպաստ՝ մշակութեան համար. միւս կողմէ չէր տեսնուեր ո՛չ մօտալուս վախճան մը այդ քառասյին վիճակին, եւ ոչ ալ յաղթական ելք մը. ապագան մշուշով պատած էր:

Թուրքերը սկսած էին մտնել Ղարաբաղ ու յարձակումներ դործել Սղնախներու վրայ. վերջին բախումներուն՝ որ ունեցած էին թուրքերու հետ, Հայերը չափը առած էին թուրք կանոնաւոր բա-

նակի ուժին. այո՛, յաղթած էին, բայց ի դին մեծ կորուստներու իրենց կողմէ մեռնողներու տեղը բռնող չկար, մինչդեռ թուրք բանակը նոր եկող ուժերով միշտ կը զօրանար: Ռուսական օգնութիւնը, որուն վրայ այնքան յոյսեր դրած էին, իրական ըլլալէ դեռ շատ հեռու էր, եւ չէին ալ դիտեր պատճառը թէ ինչո՞ւ կ'ուշանայ, երբ ճիշտ ժամանակն էր օգնութեան հասնելու:

Ասոնք էին ահա՛ այն դրդապատճառները, որոնք յուսալքում առաջ կը բերէին հայ զինուորութեան մէջ, ու քայքայում՝ հայ Սըղնախներուն, որոնք կը սկսէին կամաց կամաց պարպուիլ: Դժգոհանախներուն, որոնք կը սկսէին տուները, ու կը լծուէին իրենց սոներէն ոմանք կը քաշուէին իրենց տուները, ու կը հեռանային ու կ'երթուի իրենց զինուորական առաջնորդներուն, կը հեռանային ու կ'երթային ուրիշ ամբարցած տեղեր. իսկ ուրիշ մաս մըն ալ կը մնար իր գտնուած Սղնախին մէջ, բայց իր դանդաղանքով կը կատարէր քայքայիչ գործունէութիւն մը:

Եսայի Կաթողիկոս, որ ազատագրութեան հեռանկարով՝ Օրբի հետ միասին սկիզբ տուած էր շարժումին, զայն լաւ կազմակերպած ու ապա իր դիւթիչ հմայքով խանդավառած հայ զինուորութիւնը, մինչեւ իր կեանքի վերջը ապրեցաւ միայն մէկ նպատակի համար, տեսնել հայ ազգը՝ տէր ու տիրական իր կեանքին. ան իր այս ուղտեմտութեան ու հայրենասիրութեան մէջ հաւատարիմ մնաց, եւ դամտութեան ու հայրենասիրութեան մէջ հաւատարիմ մնաց, եւ զործեց նոյնիսկ այն ժամանակ՝ երբ թուրք փաշան ուղեց կաշառելի զինք, համաձայնութեան գալու եւ խաղաղ կերպով թուրքերուն յանձնելու Ղարաբաղը: Սակայն իր այս ուղղամտութիւնը եւ իր մաքուր ներու Ղարաբաղը: Սակայն իր այս ուղղամտութիւնը եւ իր մաքուր ներու հայրենասիրութիւնը շուտով մոռցուեցան: Երբ նեղութիւնները, անձկութիւններն ու անորոշ ապագան սկսան ուժեղանալ Սղնախները, Կաթողիկոսին դէմ դարձուցին եթէ ոչ իրենց գէնքերը, գէթ իրենց վիրաւորանքի սլաքները, որոնք զինք գերեզման իջեցուցին:

1728 թուականի Հոկտեմբեր ամսուն, Եսայի Հասան-Ջալալեան Կաթողիկոս կը կնքէր իր մահկանացուն, ճիշտ այն թուականին՝ երբ Ղափանի մէջ ալ հայ ազգը կը կորսնցնէր ազատագրական շարժումի մէկ ուրիշ հերոս առաջնորդ մը՝ Դաւիթ բէկը: 1728 թուականը հայ ազգին համար կ'ըլլար դժբախտ տարի մը, եւ արեւմուտքը՝ հայ ազատագրական շարժումին: Եսայի Կաթողիկոսի մահէն ետք, Ղարաբաղի Սղնախներու մէջ կը կատարուէր ազատագրական շարժումի ողբերգական վերջին արարը:

Եսայի Կաթողիկոսէն յետոյ, շարժումին գլուխ կ'անցնէր Աւան իւզբաշին, Եսայիէն վերջ ամէնէն հեղինակաւոր անձնաւորութիւնը: Թուրքերու յառաջախաղացման դէմ դիմագրութիւնը կը շարունակուէր առաջուան պէս, ինչպէս նաեւ դիմումները՝ ռուս պետութեան մօտ: 1729 թուականին, Աւան իւզբաշին իր հետ առնելով Թարխան՝

իր եղբայրը, եւ ուրիշ քանի մը իւզբաշիններ, Պաքու կ'երթար՝ բանակցելու ոռւս հրամանատարին հետ, ճար մը գտնելու իրենց նեղ կացութեան, բայց հետեւանքը կ'ըլլայ նոյն. այն ատեն Աւան վերջին փորձ մըն ալ կ'ընէր, աղերսագրով մը Մոսկուա Պետրոս երկրորդին մօտ զրկելով իր եղբայրը՝ Քարխան, եւ Գրիգոր, Մելքոն եւ Ներսէս իւզբաշինները, կրկնելով իր աղերսը:

1729ի Հոկտեմբեր 21ին, Յարի հրահանգին վրայ՝ Արտաքին Գործերու Նախարարութիւնը հարցումներ կ'ուղղէր Քարխանին, որոնց մի առ մի կը պատասխանէր: Այդ պատասխաններէն կ'եզրակացուի թէ 1. հայ զինուորութեան թիւն էր 30.000. հրամանատարներն էին Աւան, Քարխան, Աբրահամ, Օհան, Պաղի եւ Աւագ: 2. Ամէն հայ զինուոր ունէր իր զէնքը: 3. Բացի թնդանօթէն, տեղացիները կը պատրաստէին իրենց զէնքերը, երկիրը շատ բարեբեր էր, ունէր նաեւ շատ մը հանքեր: 4. Արեւելեան Հայաստանի մէջ կային լաւ ցեղի պատկանող ձիեր: 5. Կը խնդրէին ոռւս զինուորական օգնութիւն: 6. Հայերը հակառակ էին դէպի Կասպից ծովի եզերքը դաղթելու:

Ինչպէս վերեւ ըսինք, առևտրուն ծրագրին էր Հայերը փոխադրել Կասպեան հողերը՝ զարգացնելու համար զանոնք, բայց տեսնելով որ Հայերը հակառակ են դաղթելու ծրագրին, կը դիմեն ուրիշ հնարքի մը: Քարխան դեռ Մոսկուա գտնուած ժամանակ՝ իրեն կ'առաջարկեն որ եթէ իւզբաշինները ու իրենց զինուորները ուզեն դաղթել Ռուսաստանի ձեռքին տակ գտնուած հողերը, իրենք պատրաստ են դաղթող իւզբաշիններուն տալ ոռւս բանակի զինուորական աստիճանը եւ բարձր թոշակ: Իւզբաշինները կը դրուին դժուարին երկրներանքի մը առջեւ. կա՛մ առանց ոռւսական օգնութեան կ'ուրիշ թուրք կանոնաւոր բանակի դէմ, եւ կա՛մ ընդունիլ ոռւսական պետութեան առաջարկը. իւզբաշինները ընտրութիւն ընելու շատ ժամանակ չեն դնէր. 1729 թուականը դեռ չվերջացած, Աւան, Քարխան եւ ուրիշ հինգ իւզբաշիններ արդէն մաս կը կազմէին ոռւս բանակի մէջ զըտնող «Հայկական էսքադրոն» կոչուած զօրաբաժնին: Իսկ այդ ժամանակէն կը սկսէր ցրուիլ Սոլնախներու զինուորութիւնը ու վերջ կը դրուէր ազատագրական շարժումին:

Մինչեւ հիմա տեսանք ժի. դարու վերջերը եւ ժԸ.ի սկիզբները՝ Ղարաբաղի մէջ ծայր տուած ու ծաւալ առած ազատագրական շարժումի պատմութիւնը, որ կղզիացած չմնաց Ղարաբաղի մէջ, այլ՝ իր կարգին վարակեց նաեւ մերձակայ պատմական Միւնիքը, որ նոյն ժամանակ Ղափան կը կոչուէր:

Ազատագրական շարժումի պատմութիւնը թերի պիտի ըլլար եւ իր մուտք կէտերը պիտի ունենար՝ եթէ նկատի չառնուէր ու չուսումնասիրուէր նաեւ Ղափանի մէջ ալ ծաւալող նոյն շարժումին պատմութիւնը, որ Դաւիթ բէկի զլխաւորութեամբ ու առաջնորդութեամբ՝ փառաւոր էջեր արձանագրեց ժԸ. դարու մեր պատմութեան մէջ:

Ղափանի կռիւները չէին նմաներ Ղարաբաղի մէջ տեղի ունեցած ընդհարումներուն, որովհետեւ Ղարաբաղի մէջ՝ ազգաբնակչութիւնը կազմուած էր ամբողջապէս հայ տարրէ, ու երկիրը կը կառավարուէր հայ Մելիքներով. այն պատերազմները որ տեղի ունեցան Ղարաբաղի մէջ, պարսիկ խաներու ու Սոլնախներու միջեւ, դուրսէն կատարուած յարձակումներ էին, մինչ երկրին ներսը չկար դաւաճանող թշնամի տարր: Մինչդեռ Ղափանի դիրքը բոլորովին տարբեր էր. որքան որ ազգաբնակչութեան մեծամասնութիւնը կազմուած էր Հայերէ, բայց շիւղ թիւ չէր ներկայացներ նաեւ ներգաղթած թուրք տարրը, որ բռնած էր Ղափանի դաշտագետինը եւ ունէր առանձնաշնորհեալ դիրք, իսկ երկիրը կը կառավարուէր թուրք խաներով ու բէկերով, որոնք կռթնած իսլամ տարրին վրայ՝ տիրապետական կեղծքիչ իրաւունքներ ձեռք ձգած էին հայ հպատակներուն վրայ:

Աղուաններու կողմէ Սպահանի կեդրոնական կառավարութեան զբաւումով, գաւառներու խաներն ու բէկերը եղան աւելի ինքնազրուի ու աւելի կեղծքիչ. իսկ թուրքիա ու Ռուսաստան ուզեցին օգտուիլ այդ շփոթ կացութենէն, քաջցին Պարսկաստանի եւ անոր հըպատակ երկիրներուն վրայ, իւրաքանչիւրը իր ախորժած բաժինը իւրացնելու: Մինչ այդ՝ Ղարաբաղի ու Ղափանի մէջ, խաներու եւ բէկերու անասնձ կեղծքումներն ու անարդարութիւնները մղեցին հայ ժողովուրդը դիմելու ինքնապաշտպանութեան ու ազատագրական շարժումի. իրարու դէմ ելան դարաւոր երկու հարեւան ժողովուրդներ, մէկը երկար ժամանակ սուբով ու բռնութեամբ տիրապետող, իսկ միւրը՝ բնիկ ժողովուրդը, հպատակ՝ կեղծքուած ու տանջուած, որու հոգւոյն մէջ դարերով կուտակուած էր դառնութիւն ու վրէժխնդրութիւն: Երկու տարրերու բախումները եղան բնաջնջումի պատերազմներ, երկու կողմերն ալ կը կատարէին անթութիւններ, միատեսակ հեծան տէրը դառնալու համար երկրին. ի վերջոյ՝ ազատագրական բանակն էր որ յաղթանակը պիտի տանէր:

Ահա այս վիճակի մէջ էր Ղարաբաղի ու Ղափանի կացութիւնը, երբ հարաւէն օսմանեան բանակը կը քալէր պարսկահպատակ երեւան քաղաքի վրայ, ու գրաւելով զայն՝ բոլոր զօրութեամբ կ'ուղղուէր արեւելեան Հայաստան:

Եթէ Հայերուն դիւրին էր պատերազմիլ ու յաղթել դաւառներու մէջ գտնուող ներքին թշնամիին, այսինքն՝ այլազգի խուժանին, սակայն յաղթելու եւ երկրէն դուրս վտարելու համար օսմանեան

մարզուած ու հզօր բանակը՝ անբաւական էին հայրենասիրութիւնը եւ բնական անառիկ դիրքերը. հարկաւոր էր ունենալ, ամէն բանէ առաջ, փորձառու ու ռազմադէտ առաջնորդ մը, որ ըլլար նաեւ կարող զօրավար մը. եւ Հայերը բախտաւոր եղան ունենալու ժամանակին պահանջած այդ մարդը՝ Դաւիթ բէկի անձնաւորութեան մէջ:

Դաւիթ Բէկ՝ իբրեւ անհատ եւ իբրեւ զինուորական, մեր ազատագրական շարժումին համար եղաւ Նախախնամական պարգեւ մը:

Իբրեւ մարդ՝ ունէր այնպիսի յատկութիւններ, որոնք մագնիսի ազդեցութեան նման իրեն կը գրաւէին թէ՛ ժողովուրդին եւ թէ՛ զինուորներուն համակրանքն ու վստահութիւնը, եւ իր ձեռքին մէջ անոնք կը դառնային քաջարի ռազմիկներ: Այսպէս է որ մեզի կը ներկայացնէ Դաւիթ Բէկը՝ Ղափանցոց պատմութեան ժամանակակից հեղինակը. «Ինքը Դաւիթ»՝ ազնուական, բարեպաշտ, արդարապարտ, արխախրտ, ներողամիտ, գօրաւոր էր խօսքով ու գործով, զարգացած անձ, նախանձաւոր ազգին բարօրութեան ու վրէժխնդիր անըրթացքին՝ Դաւիթ Բէկ կը ցուցադրէր ուրիշ յատկութիւններ եւս. այսպէս՝ «հեռատես, իր հեղինակութեամբ պարտադրող, հզօր կամօք, պէտք եղած տեղը՝ պահանջկոտ, վարձատրող քաջերը, եւ պատժող չարագործներն ու վախկոտները, անյաջողութեան մէջ չլքանող, իսկ յաջողութեան ժամանակ՝ չշլացող»: Ահա այս մարդն էր՝ զոր Վրացիներու Շահնաւազ թագաւորը արեւելեան Հայաստան կը ղըրկէր՝ պաշտպանելու համար զայն, Պարսիկներու եւ Օսմանցիներու ոտնձգութիւններուն եւ աւարառութիւններուն դէմ:

Դաւիթ Բէկ իբր զինուորական՝ ծանօթ դէմք էր: Հաղիւ Ղափան մտած, իր գալստեան համբաւն արդէն ծաւալած էր այդ նահանգին մէջ, օրէ օր իրեն կը ձգէր բազմութիւն մը, այսպէս կը համախմբէր իր շուրջը՝ չորս հարիւր, երկու հազար, չորս հազար ու աւելի՝ ո՛չ թէ մարզուած ու պատրաստ զինուորութիւն մը, այլ զէնքի գործածութեան իսկ անվարժ գեղացիներ, որոնցմէ Դաւիթ Բէկ՝ իբրեւ զինուորական անզուգական կազմակերպիչ՝ մէջտեղ հանեց բանակ մը, որ եղաւ ահն ու սարսափը Պարսիկին ու Օսմանցիին: Դաւիթ Բէկ երբ Ղափան կը մտնէր, այնտեղ կը գտնէր միայն զինուորական քանի մը անկազմակերպ ու ցիրուցան ուժեր, իսկ ժողովուրդին մէջ՝ ապստամբողական տրամադրութիւն. իր եռանդն ու իր զինուորական ընդունակութիւնն ու հմտութիւնը գործեց պէտք եղած հրաշքը:

Դաւիթ Բէկ իր հետ միասին Ղափան կը բերէր արդէն պատերազմ մղելու պատրաստուած ծրագիր մը, իրմէ յղացուած, այսինքն՝ պարտիզանական կոիւրի եղանակը, փոքր խումբերով ընդհարումներ ունենալ թշնամիին հետ, թեթեւ ու զիւրաշարժ՝ յանկարծակի յարձա-

կելով թշնամիին վրայ, շփոթութիւն ձգել շարքերու մէջ, սարսափեցնել ու ցրուել զայն: Ներքին թէ արտաքին ճակատներու վրայ՝ այն յաջողութիւնները, որ ան ձեռք բերաւ Ղափանի մէջ, արդիւնք էին զինուորական այն կազմակերպութեան ու պայքարի այն եղանակին՝ որ ան հնարեց ու կիրարկեց ազատագրական պատերազմներու ընթացքին:

Դաւիթ Բէկի կարգադրութեամբ՝ Ղափանի մէջ գոյութիւն չունէր տեղի մը մէջ համախմբուած մեծ բանակ մը. իւրաքանչիւր դաւառ պէտք էր ունենալ իր զօրաբաժինը, Մելիքի մը կամ Իւզրաշիի մը հրամանին տակ. ամէն մէկ զօրաբաժին պիտի պաշտպանէր իր խնամքին յանձնուած դաւառը, բայց միեւնոյն ժամանակ միշտ պատրաստ պիտի ըլլար օգնութեան հասնելու հարեւան դաւառի Մելիքի կամ Իւզրաշիին, եթէ ան ենթարկուէր յարձակման: Նման անջատ ջոկատներու կոիւրը ու պաշտպանութեան եղանակը ունեցաւ իր յաջող արդիւնքը, որովհետեւ կը գործէր ընդհանուր հրամանատարի մը ղեկավարութեան տակ: Իսկ երբ պատերազմը ընդհանուր ու հասարակաց թշնամիին դէմ էր, բոլոր զօրաբաժինները կը համախմբուէին՝ ընդհանուր հրամանատարին առաջնորդութեան տակ, որ նոյն ինքն Դաւիթ Բէկն էր:

Դաւիթ Բէկ ունէր իր սպայակոյտը եւ իր կեդրոնատեղին՝ Հալիճօրը, ուրկէ կը ղըրկէր իր հրահանգներն ու հրամանները դաւառներու զօրաբաժիններուն: Դաւիթ Բէկի հեղինակութիւնը իր զինուորներուն վրայ չափազանց մեծ էր. ուստի, անոր լարած մեքենան անսխալ կերպով կը գործէր:

Դաւիթ Բէկի իմաստուն կազմակերպութեամբ ու անտեղիտալի եւ կորովի կամքով առաջնորդուած, իսկ քաջարի զինուորներու կողմէ ալ՝ եռանդազին ու անձնուէր տրամադրութեամբ գործադրուած, Ղափանի ազատագրական շարժումը, կարճ ժամանակամիջոցի մէջ հասաւ փայլուն արդիւնքներու, որոնք ոչ միայն նոյն ժամանակի տեղացի ժողովուրդը խանդավառեցին, այլ նաեւ յաջորդ սերունդները, որոնք սրտին ու մտքին մէջ անջնջելիօրէն դրօշմեցին Ղափանի ու Դաւիթ Բէկի անունները*:

(Շար. 3)

Հ. ՍԱՄՈՒԷԼ ԱՐԱՄԵԱՆ

* Մանօք. — Առանձին մասով պիտի ներկայացուի օգտագործուած աղբիւրներու ընդարձակ մատենագիտութիւնը, մանրամասն նշումներով եւ յարակից բացատրութիւններով: